Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 18.11.2021Թ. N 1902-Լ ՈՐՈՇՄԱՆ N 1 ՀԱՎԵԼՎԱԾՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ 2025Թ. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ)

Վարչապետի աշխատակազմ					
ծրագրի հերթական համարը	նպատակը	միջոցառումների անվանումները	միջոցառումների իրականացման արդյունքները	միջոցառումների չկատարման, այդ թվում՝ սահմանված ժամկետում, պատճառները	ծանոթագրություն
1	2	3	4	5	6
1.2	Մասնակցային կառավարման գործիքների, կարգավորումների և մեխանիզմների բարելավում	1. Որոշումների կայացման գործընթացներում վերանայված և լրամշակված են՝ • էլեկտրոնային մասնակցային գործիքները և դրանց նշանակությունը (Էլեկտրոնային գործիքները որպես մասնակցային գործընթացի «միջոց» սահմանելու սկզբունքը): • Հանրային քննարկումների և լսումների վերաբերյալ ուղեցույցները մշակված	1. Քարտեզագրվել են Հայաստանում մասնակցային կառավարման գործող գործիքները: Մասնավորապես ուսումնասիրվել են www.edraft.am իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկման հարթակը և https://հանրագիր.ամ էլեկտրոնային հանրագրերի հարթակը: Դիտարկման առարկա են հանդիսացել ոչ միայն կիրառվող թվային լուծումները, այլև հանրության մասնակցության հետ կապված առկա խնդիրները, ինչպես նաև համապատասխան իրավական կարգավորումները: 1.1. www.edraft.am հարթակի վերաբերյալ շահագրգիռ կողմերի հետ անցկացված հանդիպումների արդյունքում նախատեսվում է, ի թիվս այլ բարելավումների, ներդնել մասնագիտական և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ)		

		են: 2. Պետական կառավարման համակարգի մարմինների կարողությունները մասնակցային գործընթացների նկատմամբ կատարելագործված են: 3. Մասնակցային գործընթացների վերաբերյալ տարեկան վերլուծությունը և վիճակագրությունը պահպանված է:	ներկայացուցիչների շտեմարան (ոլորտային բազա)՝ նպատակ ունենալով ապահովել իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկումներին ավելի թիրախավորված և բովանդակային մասնակցություն: 1.2. հանրագիր.ամ հարթակի շուրջ քննարկումները իրականացվել են հանրագրերի ինստիտուտի վերանայման շրջանակներում: Արդյունքում գույքագրվել են մի շարք խնդիրներ՝ կապված հանրագրի ձևի և բովանդակության որոշակիության, հանրագիր ներկայացնողի նույնականացման մեխանիզմների, ինչպես նաև պետական համակարգում հանրագրերի հետ աշխատանքի համար պատասխանատու սուբյեկտների և համապատասխան թվային լուծումների հետ: 2. Մշակվել և ներդրվել են նախարարին և ՀՀ կառավարության ենթակա մարմնի ղեկավարին կից հասարակական խորհրդի ձևավորման կարգը և աշխատակարգը: Տվյալ կարգավորումը սահմանում է հասարակական խորհուրդների ձևավորման և գործունեության միասնական շրջանակը՝ նպատակ ունենալով ապահովել քաղաքացիական մասնակցությունը քաղաքականությունների մշակման, իրականացման և գնահատման գործընթացներում: Կարգավորումը մասնավորապես սահմանում է՝ • հասարակական խորհուրդների ստեղծման հիմքերը, • կազմի ձևավորման սկզբունքները (ՔՀԿ-		

			ների, շահառուների և ոլորտային փորձագետների ներգրավում), • աշխատակարգը (նիստերի գումարման կարգ, օրակարգի ձևավորում, արձանագրում), • խորհրդի և համապատասխան մարմնի միջև խորհրդատվական փոխգործակցության ձևաչափերը, • առաջարկների ներկայացման, քննարկման և արձագանքման մեխանիզմները: Կարգավորումը չի սահմանափակվում միայն քաղաքականություն մշակող նախարարություններով, այլ տարածվում է նաև ՀՀ կառավարության երեք ենթակա մարմինների վրա՝ Քաղաքաշինության կոմիտե, Պետական եկամուտների կոմիտե և Կադաստրի կոմիտե: Միաժամանակ, պայմանավորվածություն է ձեռք բերվել Շվեդիայի կառավարության Ֆոլկ Բերնադոտ ակադեմիայի (ՖԲԱ) հետ՝ մշակելու կարողությունների զարգացման մոդուլներ հասարակական խորհուրդների գործունեության համար պատասխանատու և համակարգող պաշտոնատար անձանց համար: Առաջին աշխատանքային հանդիպումը կայացել է 2026 թվականի հունվարի 29-ին: 3. Հանրային քննարկումների և լսումների վերաբերյալ ուղեցույցների մշակումը նախապես նախատեսված էր իրականացվել ԱՄՆ ՄԶԳ ծրագրերի աջակցությամբ: Սակայն, պայմանավորված կազմակերպության		

			գործունեության դադարեցմամբ, իրականացվել են քննարկումներ այլ միջազգային և տեղական գործընկերների հետ՝ ուղեցույցների մշակումը և ներդրումն ապահովելու նպատակով: Մասնավորապես, համապատասխան պայմանավորվածություններ են ձեռք բերվել և ամրագրվել Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ), ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի / ԿԶՆ-ԼԵԲ, ինչպես նաև Ֆոլկ Բերնադոտ ակադեմիայի (ՖԲԱ) հետ՝ ուղեցույցների համատեղ մշակման և կարողությունների զարգացման բաղադրիչների ներառման ուղղությամբ: Միևնույն ժամանակ, քննարկումներ են իրականացվել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների գործընկերների և ՀՀ արդարադատության նախարարության հետ՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի շրջանակներում՝ • հանրության վաղ ներգրավման ինստիտուցիոնալացման, • նոր նախաձեռնությունների և նախագծերի հանրային քննարկման համար պատշաճ ժամանակային շրջանակների սահմանման, • ինչպես նաև հանրային մասնակցության որակի բարձրացման այլ հնարավոր կարգավորումների վերաբերյալ:		

			4. Մասնակցային գործընթացների վերաբերյալ տարեկան վերլուծությունն ու վիճակագրությունը համակարգված կերպով պահպանվել են: Այս շրջանակում իրականացվել է նախարարություններում գործող հանրային մասնակցության հարթակների քարտեզագրում, ինչպես նաև հասարակական խորհուրդների նախկին կարգավորմամբ գործող նիստերի քանակական վերլուծություն: Միաժամանակ, վերլուծության է ենթարկվել www.edraft.am հարթակի վիճակագրության բաժինը, որի արդյունքներով առաջարկություններ են ներկայացվել ՀՀ արդարադատության նախարարությանը՝ հարթակի վիճակագրական գործիքների և ցուցիչների բարելավման ուղղությամբ: Վիճակագրության կատարելագործումը հնարավորություն կտա ձևավորելու ավելի հստակ և համադրելի պատկեր իրավական ակտերի նախագծերի շուրջ հանրային մասնակցության դինամիկայի, ներգրավվածության մակարդակի և միտումների վերաբերյալ, ինչպես նաև կծառայի որպես ապացուցողական հիմք մասնակցային քաղաքականությունների հետագա բարելավման համար: 5. ՀՀ ռազմավարական կառավարման համակարգում բաց կառավարման մեյնսթրիմինգը ներառվել է որպես համակարգային բաղադրիչ: Այն դիտարկվում է ոչ թե որպես առանձին		

			նախաձեռնություն, այլ որպես ռազմավարական պլանավորման, քաղաքականությունների մշակման, իրականացման և գնահատման ամբողջական ցիկլի խաչաձև սկզբունք, որը պետք է ինտեգրվի ոլորտային և գերատեսչական ռազմավարություններում, ծրագրերում և գործողությունների պլաններում: Մեյնսթրիմինգի շրջանակում սահմանվել են չափելի ուղղություններ և ցուցիչներ, որոնք վերաբերում են՝ • հանրային մասնակցության մեխանիզմների կիրառմանը, • շահագրգիռ կողմերի վաղ և իմաստալից ներգրավմանը, • բաց տվյալների և թափանցիկության գործիքների օգտագործմանը, • հետադարձ կապի (feedback loop) ապահովմանը և առաջարկների հաշվառման մակարդակին: Տվյալ մոտեցման մեթոդաբանությունը մշակվել է և ներկայացվել հանրային կարծիքի, նպատակ ունենալով ապահովել շահագրգիռ կողմերի մասնակցությունը, մեթոդաբանական լուծումների համատեղ հղկումը և դրանց կիրառելիության բարձրացումը պետական կառավարման հաակարգում:		
2.4	Ապատեղեկատվության դեմ պայքարի գործողությունների իրագործում	ՀՀ կառավարության և քաղաքացիական հասարակության համատեղ ջանքերով	2025թ. -ին «Ապատեղեկատվության դեմ պայքարի 2024–2026թթ. հայեցակարգի» շրջանակում իրականացվել են պետական, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի համատեղ		

		մշակվել է ապատեղեկատվության դեմ պայքարի փաստաթուղթը և իրականացվել են համապատասխան գործողությունները:	գործողություններ: Ուժեղացվել են պետական կառույցների ռազմավարական և ճգնաժամային հաղորդակցության կարողությունները, մշակվել են հաղորդակարգեր : Ընդլայնվել է համագործակցությունը ԶԼՄ-ների, փաստերի ստուգման հարթակների, բջջային օպերատորների և միջազգային գործընկերների հետ: Իրականացվել են լայնածավալ հանրային իրազեկման ծրագրեր և հաղորդումներ: Արտակարգ իրավիճակներում ապահովվել է օպերատիվ ու վստահելի տեղեկատվության տարածում: Մեծ ուշադրություն է դարձվել մեդիագրագիտության զարգացմանը՝ դպրոցներում, նախադպրոցական հաստատություններում, բուհերում և գրադարաններում: Վերապատրաստվել են հազարավոր ուսուցիչներ և ձևավորվել մենթորական ցանցեր: Իրականացվել են հետազոտություններ ուսուցիչների և սովորողների մեդիա կարողությունների վերաբերյալ: Երիտասարդների, ծնողների և համայնքների համար իրականացվել են կրթական և իրազեկման ծրագրեր:		

Փոխվարչապետ Մ. Գրիգորյանի գրասենյակ					
NN	Նպատակ	Միջոցառումներ	Միջոցառումների իրականացման արդյունքները	Միջոցառումների չկատարման, այդ թվում՝ սահմանված ժամկետում, պատճառները	Ծանոթագրություն
1	2	3	4	5	6
2.1	Ռազմավարական պլանավորման և քաղաքականության մշակման համակարգի արդիականացում	Ռազմավարական պլանավորման շրջանակի ու մեթոդաբանության վերանայում, ներառյալ՝ ձևաչափերի ու ուղեցույցների մշակում	- ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի N 252-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու արդյունքում (18.09.2025-ին) ներդրվել է ռազմավարական կառավարման նոր համակարգ, որով հստակեցվել են ռազմավարական պլանավորման փաստաթղթերի աստիճանակարգությունը, փաստաթղթերին ներկայացվող մեթոդական պահանջները, այդ թվում՝ ձևաչափերը, դրանց կապը հանրային ֆինանսների պլանավորման փաստաթղթերի ու կառավարության ծրագրի հետ:		
3.5	Հանրությանը մատուցվող ծառայությունների արդիականացում	Կյանքի փորձառությունների սկզբունքի վրա հիմնված ծառայությունների վերակառուցում՝ առաջնահերթություն տալով ընտրված 12 փորձառություններին (ըստ հրապարակված պլանի), և ինտեգրում Հայաստանի ծառայությունների ազգային հարթակին	- Գործարկվել է «Ունենալ և վարել ավտոմեքենա» ծառայության նվազագույն գործունակ պրոդուկտը (MVP) սեպտեմբերի 1-ին: Կատարվել է 700+ գործարք: - Դեկտեմբերին գործարկվել է նոր բիզնես ռեգիստրի համակարգի հիմնական հատվածը, այդ թվում՝ դեպոզիտարիայի հետ ինտեգրումը: - Զբոսաշրջության ոլորտի բիզնեսների ծանուցման համակարգի մշակումը մոտենում է ավարտին, նախատեսվում է համակարգը գործարկել 2026թ. փետրվարին: - Մտավոր սեփականության գրասենյակի հետ համատեղ իրականացվում է իրավունքների		

			գրանցման գործընթացի թվային փոխակերպման գործընթաց, իսկ նոր համակարգի համար մշակվել է տեխնիկական նկարագիր: Մատակարար կազմակերպության համար մրցույթը կհայտարարվի 2026թ. փետրվարի առաջին շաբաթվա ընթացքում: - «Երեխայի ծնունդ» կյանքի իրադարձության շրջանակում հունիսին կգործարկվեն «Երեխայի ծննդյան վկայականի ստացում», «Երեխային պոլիկլինիկայի կցագրում», «Երեխայի ծննդյան միանվագ նպաստի ստացում» ծառայությունները: - Մշակվել է ֆիզիկական անձանց եկամուտների հայտարարագրման նոր հավելվածի հայտարարագրման բաժնի ամբողջական դիզայնը, որը ներկայացվել է ՊԵԿ-ին: - «Պահպանել առողջությունը» կյանքի իրադարձության շրջանակում հստակեցվել են աշխատանքների հիմնական ուղղությունները: - Կյանքի մյուս իրադարձությունների թվայնացման ուղղությամբ ձեռնարկվել են նախապատրաստական աշխատանքներ՝ դրանց ճանապարհային քարտեզի կազմման ու դերերի հստակեցման ուղղությամբ:		
3.6	Հանրությանը մատուցվող ծառայությունների արդիականացում	Թվային համակարգերի կիբեռանվտանգության չափանիշների սահմանում և լիարժեք գործարկում	- Սահմանված են կիբեռանվտանգության ինստիտուցիոնալ հիմքերը, կարգավորումները և չափանիշները, այդ թվում՝ • Ընդունված «Կիբեռանվտանգության մասին» ՀՀ օրենքը և կառավարման շրջանակը հստակ սահմանում են դերերը, պարտականությունները և որոշումների ընդունման մեխանիզմները կիբեռճգնաժամերի ժամանակ՝ հնարավորություն տալով արագ, կանխատեսելի և համակարգված արձագանքել առանց խափանումների: • Մշակվել են կրիտիկական տեղեկատվական ենթակառուցվածքների նույնականացման		

			մեթոդաբանության նախագիծը, ազգային կիբեռմիջադեպերի դասակարգումը, ազգային կիբեռմիջադեպերի արձագանքման գրքույկները՝ որպես ենթաօրենսդրական ակտերի մշակման գործընթացի մաս: • Համաշխարհային բանկի և NRD ընկերության հետ իրականացվել է Ենթազգային կիբեռհասունության գնահատում՝ համայնքապետարանների, ԲՏԱ, տեղեկատվական կենտրոնների ու նախարարությունների համար, արդյունքները ամփոփվել են հաշվետվությամբ: · Ապահովված են տեխնիկական հիմքերի ու համակարգը սպասարկելուն միտված մարդկային կարողությունները, այդ թվում՝ • Հանրությանը մատուցվող ծառայությունների և կառավարության թվային ենթակառուցվածքների պաշտպանությունն ամրապնդվել է՝ ապահովելով բարելավված ազգային կիբեռդիմակայություն, առաջադեմ AM-CERT հասունություն և վկայագրված մասնագիտական ներուժ: Գործող պետական SOC-ը թույլ է տալիս իրականացնել շուրջօրյա մոնիթորինգ, կիբեռմիջադեպերի վաղ հայտնաբերում և արդյունավետ արձագանք՝ ապահովելով կայունություն զգայուն գործընթացների, այդ թվում՝ ընտրական ենթակառուցվածքների ընթացքում: • 2025թ. հունվարից իրականացվել են կիբեռանվտանգության ներթափանցման թեստավորումներ 13 պետական կառույցներում: • Հայտնաբերվել և կասեցվել են կառավարական ցանցում վնասակար լրտեսական ծրագրերի գործողությունները, ներդրվել է աշխատակայանների և		

			սերվերների մշտադիտարկման համակարգ: Ներկա պահին կառավարության ցանցում իրականացվում է 545 աշխատակայանների և սերվերների մշտադիտարկում 8/5 գրաֆիկով: Իրականացվել են մի շարք վերապատրաստումներ կիբեռանվտանգության մակարդակը բարձրացնելու և ռիսկերը նվազեցնելու ուղղությամբ: • ՀՀ ԲՏԱ նախարարության հետ համատեղ իրականացվել են մի շարք նախաձեռնություններ՝ ուղղված Հայաստանի կիբեռդիմակայունության ամրապնդմանը. անցկացվել են Կիբեռանվտանգության հաքաթոն (68 մասնագետներ՝ մասնավոր և պետական կառույցներից), սպառնալիքների որսի դասընթաց Քարնեգի Մելոն համալսարանի մասնագետների հետ (46 մասնակից), «ITU International Cyberdrill» միջազգային կիբեռզորավարժությունը Երևանում (ավելի քան 200 մասնակից՝ 106 կազմակերպություններից), ուսանողական ազգային կիբեռվարժանքը (ավելի քան 170 ուսանող, 55–ը՝ եզրափակչում), ինչպես նաև GIZ-ի հետ համատեղ կիբեռքաղաքականության աշխատաժողովը՝ 60 մասնագետների մասնակցությամբ՝ կրիտիկական տեղեկատվական ենթակառուցվածքներից:		

Փոխվարչապետ Տ. Խաչատրյանի գրասենյակ					
ծրագրի հերթական համարը	նպատակը	միջոցառումների անվանումները	միջոցառումների իրականացման արդյունքները	միջոցառումների չկատարման, այդ թվում՝ սահմանված ժամկետում, պատճառները	ծանոթագրություն
1	2	3	4	5	6
1	Գործադիր իշխանության մարմինների ինստիտուցիոնալ արդյունավետության բարձրացում	1.3 Պետական կառավարման համակարգի մարմինների ու վերջիններիս սպասարկող այլ կազմակերպությունների գործառութային վերլուծություն և դրանից բխող կառուցվածքային փոփոխությունների իրականացում	Պետական կառավարման համակարգի մարմինների կազմակերպական տիպի որոշման միասնական մեթոդաբանությունը մշակված է, որը պետական կառավարման համակարգի մարմինների գործառութային վերլուծության մեթոդաբանության հետ հիմք է հանդիսանալու 2026 թվականի 2-րդ կիսամյակում կառավարման մարմինների ֆունկցիոնալ և ինստիտուցիոնալ վերանայումների իրականացման համար:	Հաշվի առնելով, որ պետական կառավարման համակարգի մարմինների կառուցվածքային վերանայումները պայմանավորված են գործունեության առաջնահերթություններով, նախատեսվում է դրա հիմքով վերանայումներն իրականացնել Կառավարության՝ 2026-2031թթ. ծրագրային առաջնահերթությունների սահմանմանը զուգահեռ:	
2	Հանրային ծառայության մրցունակության բարձրացում	2.1 Հանրային ծառայության տեսակների ու պաշտոնների դասակարգման լավարկում	Կատարողականի նոր համակարգի ներդրման աշխատանքների իրականացման շրջանակներում Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից մշակվել են ընդհանրական և ընտրանքային կոմպետենցիաները, ինչպես նաև փոփոխություններ են կատարվել ՀՀ 1-ին փոխվարչապետի՝ 2019 թվականի հունվարի 11-ի N 3-Ն որոշման մեջ, ինչը էական նշանակություն ունի քաղաքացիական ծառայության պաշտոնների գնահատման և դասակարգման համակարգի լավարկման տեսանկյունից:		

			Մշակված կոմպետենցիաները նկարագրում են յուրաքանչյուր պաշտոն զբաղեցնողի համար պահանջվող վարքագիծը՝ սերտորեն կապելով այն համապատասխան գործառույթների իրականացման, արդյունքների տուգման, վերահսկման և դրանց նկատմամբ պատասխանատվության սահմանման հետ: Գործառութային վերլուծության մեթոդաբանության կիրառման արդյունքում գործառույթների հստակեցումը հնարավորություն կտա ձևավորել տվյալ պաշտոնին առավել համապատասխան, թիրախային և կիրառելի կոմպետենցիաներ: Միաժամանակ, Հանրային ծառայության համակարգի բարելավման նպատակով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքում և դրանից բխող ենթաօրենսդրական ակտերում կատարվել են մի շարք փոփոխություններ, մասնավորապես՝ պարզեցվել է ներքին մրցույթի ընթացակարգը, ընդլայնվել են կատարողականի գնահատման հիմքով առաջխաղացման հնարավորությունները, ճշգրտվել են մրցույթի հայտարարման և փորձնակների ներգրավման կարգավորումները, նախատեսվել են կարգապահական պատասխանատվության և էթիկայի հանձնաժողովի գործունեության կատարելագործման դրույթներ, ինչպես նաև վերանայվել են մարդկային ռեսուրսների կառավարման գործընթացների թվայնացմանն ուղղված ենթաօրենսդրական կարգավորումները:		

		2.2 Պետական հատվածում ֆինանսական շահադրդման համակարգի լավարկում	Պետական կառավարման համակարգի առանձին մարմինների կատարողականի գնահատման պիլոտային կարգը հաստատվել է Կառավարության՝ 2025թ. նոյեմբերի 27-ի N 1712-Լ որոշմամբ: Մասնավորապես՝ որոշմամբ պիլոտավորել է նոր չափորոշիչների հիման վրա պարգևատրման համակարգ, որը նպատակ ունի Կառավարության ծրագրով և ռազմավարություններով սահմանված նպատակների և խնդիրների իրականացման ուղղությամբ հաշվետու ժամանակահատվածի համար առանձնացված առաջնահերթ անելիքների կատարողականի գնահատումների միջոցով նպաստել պետական կառավարման համակարգի արդյունավետության բարձրացմանը: Ծրագրի հիմնական սկզբունքը բարձր կատարողականի համար աշխատակիցների նյութական խրախուսումն է՝ որպես համակարգի արտադրողականության աճը երաշխավորող գործոն: Պարգևատրման լրացուցիչ համակարգի պիլոտավորման արդյունքում նախատեսվում է վերլուծել գրանցած արդյունքները և վերջնականացնել հանրային ծառայողների վարձատրության համակարգի բովանդակությունը՝ վարձատրության գործող համակարգը 2026թ. ընթացքում վերանայելու նպատակով:		